

18. “Ծաղկոցիկ արխարունկանի ուսման, յոյժ հարկաւոր նորակիրթ մանկանց: Ի վեհափառ հայրապետութեան Տեառն Սիմէօնի Սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ սուրբ Սաղիմայ Տեառն Պօղոսի երջանկազարդ Վ. Ի. Հրամանաւ մեծի մայրաքաղաքիս Տեառն Գրիգորի Երանաշնորհ Վ. Ի եւ Արժանաժառանգ Պատրիարզի: Ի Թուին Հայոց 1218 յունիսի (15): Տպագրեցեալ ի տպարանի Յօհաննիսի եւ Յակօբու:” (Մատ. 286.)

Մեծութիւն 11×6.5 սմ. էջք 1—134:

Էջ 1—123. Քրիստոնէական:

Էջ 123. Աստութիւնք ինչ ի վերայ եօթն խնդրուածոց ամենասուրբ Հայր մերին, ի տետրակիս շարագրողէ:

Էջ 124. “Յանկ ելեալ աւարտեցաւ Ծաղկոցիկս քրիստոնէականի ուսման... Ուստի խնդրի ի վայելող եղբարցդ յիշել ի մաքրափայլ աղօթս ձեր ի Քրիստոս զՏիվրիկեցի հանգուցեալ մահտեսի Խաչատուրի որդի զմահտեսի Պօղոսն, որոյ արդեամբն տպեցաւ փոքրիկ տետրակս այս:”

Հ. Գ. Զարբ. (Մատ. էջ 286) այս գրքի մասին կը գրէ “...չկայ մասնաւոր յիշատակ մը, որով շարագրողին ով ըլլալը իմացուի: Հաւանական կ'երեւայ թէ Սարգիս Սարաֆեան Վ. ն ըլլայ:” Եւ իրօք իմ դիմումիս վրայ Գեր. Հ. Մկրտիչ Պօտուրեան Վ ենեաիկէն գրեց ինձ՝ թէ իրենց մատենադարանի պակասաւոր օրինակին կողքին վրայ ժամանակակից Հայրերէն մին նշանակած է. “Ի Սառաֆեան Սարգիս վարդապետէ շարագրեալ, եւ յաղագս նկատմանց ինչ ոչ տպեալ յանուն նորա:” Վ ինննայի Մխիթարեանց մատենադարանի ամբողջական օրինակն ըստ խնդրանաց քննելով Գեր. Հ. Բառնարաս